

**ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ
(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ)**

Երկիրը՝ **Հայաստանի Հանրապետություն**
Ծրագիրը՝ **Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի
Լրացուցիչ ֆինանսավորում (ԿՆՃԲԾ-ԼՖ)**
Վարկ No **8523-AM**

Առաջադրանքի անվանումը՝ **ԿՆՃԲԾ -ԼՖ ճանապարհների վերանորոգման աշխատանքների իրականացման նկատմամբ տեխնիկական աուդիտ**

Հղում No.: **կետ #14, ԿՆՃԲԾ -ԼՖ 1-ին և 2-րդ տարիների անկախ աուդիտ**

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է լրացուցիչ վարկ 40 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարի չափով՝ Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի (ԿՆՃԲԾ) Լրացուցիչ ֆինանսավորման նպատակով, և նախատեսում է այդ գումարից վճարումներ կատարել «ԿՆՃԲԾ-ԼՖ» **ճանապարհների վերանորոգման աշխատանքների իրականացման նկատմամբ տեխնիկական աուդիտի** խորհրդատվական ծառայությունների համար:

Տեխնիկական աուդիտը պետք է ապահովի շինարարական աշխատանքների համապատասխանությունը, պետք է կենտրոնանա ավարտված աշխատանքների որակի ուսումնասիրությանը, ստուգելու շինարարական աշխատանքների համապատասխանությունը մրցութային փաստաթղթերում նկարագրված տեխնիկական մասնագրերին և ստանդարտներին: Ուսումնասիրությունը հիմնված կլինի տեսողական ստուգումների վրա և ճանապարհի հիմնական նմուշների լաբորատոր վերլուծության վրա՝ այլ պարամետրերի հետ մեկտեղ ստուգելու շերտերի հաստությունը, աստիճանավորումը, բիտումի պարունակությունը, խտացումը, խառնուրդի ծակոտկենությունը և օգտագործվող նյութերի ընդհանուր որակը:

Խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիրը նախատեսվում է սկսել 2017թ. սեպտեմբերին և ավարտին հասցնել 2018թ.-ին:

«Հ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության «Տրանսպորտի ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ը նշված Ծառայություններն իրականացնելու նպատակով հրավիրում է իրավասու խորհրդատվական կազմակերպություններին (Խորհրդատուներ) ներկայացնելու հետաքրքրության հայտեր: Հետաքրքրված խորհրդատուները պետք է ներկայացնեն տեղեկություններ՝ նշելով, որ որակավորված են և ունեն համապատասխան փորձառություն ծառայություններն իրականացնելու համար (բրոշյուրներ, իրականացված նմանատիպ առաջադրանքների նկարագրություն, նման պայմաններում աշխատելու փորձ, անձնակազմում համապատասխան հմտություններով ունեցող անձանց առկայություն և այլն): Որակավորումները հզորացնելու նպատակով՝ խորհրդատուները կարող են միավորվել:

Խորհրդատու ընտրվելու է Համաշխարհային բանկի կողմից 2011թ. հունվարին հրապարակված, վերանայված 2014թ. հուլիսին «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից ՎՋՄՔ վարկերի, ՄՋԸ վարկերի և դրամաշնորհների միջոցներով խորհրդատուների ընտրություն և ներգրավում»՝ ուղեցույցով սահմանված «Ընտրություն» ըստ խորհրդատուի որակավորման» (CQS) մեթոդի համաձայն:

Հետաքրքրված խորհրդատուները կարող են հավելյալ տեղեկություններ ստանալ աշխատանքային օրերին՝ 10:00-ից մինչև 17:00 (տեղական ժամանակ) ընկած ժամանակահատվածում:

Հետաքրքրության հայտերի ներկայացման հրավերը պետք է ներկայացնել գրավոր (անգլերեն լեզվով), անձամբ (կամ սուրհանդակային ծառայության միջոցով) կամ էլեկտրոնային փոստով (Adobe PDF ֆորմատով) ոչ ուշ, քան 2017 թ. օգոստոսի 09-ը ստորև նշված հասցեով՝

**ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
«Տրանսպորտի ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ
Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար պրն. Վարդան Կարապետյանին**

**ՀՀ, Երևան, Տիգրան Մեծ 4
Հեռ: (374-12) 20 10 10**